

# ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2012

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### ԹԵՄԱ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

#### Հարգելի՛ դիմորդ

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրից պետք է ընտրել այն տարբերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

**Ցանկանում ենք հաջողություն:**

## Ա մակարդակ

1 Ո՞ր պրոյեկցիայով է պատկերված քարտեզը:

- 1) ազիմուտային
- 2) գլանային
- 3) հասարակածային
- 4) կոնային



2 Արշավախումբը իր նպատակակետին հասնելու համար պետք է շարժվի հարավ-արևելք: Արշավախումբը ո՞ր ազիմուտով պետք է շարժվի:

- 1) 45°
- 2) 225°
- 3) 135°
- 4) 315°

3 Երկու կետերի ուղիղ գծով հեռավորությունը քարտեզի վրա 16սմ է, իսկ ուղիղ գծով իրական հեռավորությունը՝ 24 կմ: Քարտեզի անվանական մասշտաբը կլինի:

- 1) 1սմ-ում 1,5 կմ
- 2) 1սմ-ում 384 կմ
- 3) 1սմ-ում 15 կմ
- 4) 1 սմ-ում 0,7 կմ

4 Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Երկրագունդը էլիպսաձև է և հասարակածից ավելի շատ է սեղմված քան՝ բևեռներից:
- 2) Հավասարանկյուն պրոյեկցիայում աղավաղվում են միայն անկյունները, իսկ օբյեկտների մակերեսները և գծերի երկարությունները չեն աղավաղվում:
- 3) Ամենաերկար միջօրեականը գլխավոր կամ գրոյական միջօրեականն է:
- 4) Երկրի գնդաձևության շնորհիվ մույն պահին երկրի մակերևույթի տարբեր աշխարհագրական լայնություններում Արեգակի ճառագայթներն ընկնում են տարբեր անկյան տակ:

5 Օրվա ընթացքում երկու անգամ (ցերեկը ջրավազանից դեպի ցամաք, իսկ գիշերը՝ ցամաքից դեպի ջրավազան) ուղղությունը փոխող քամին կոչվում է.

- 1) բրիզ
- 2) մուսսոն
- 3) պասսատ
- 4) ցիկլոն

(77-78) Քաղաքում օրվա ընթացքում չափել են օդի ջերմաստիճանը և ստացել են՝  $-1^{\circ}, -4^{\circ}, -6^{\circ}, -2^{\circ}, 7^{\circ}, 16^{\circ}, 10^{\circ}, 4^{\circ}$ :

77 Որոշել ջերմաստիճանի տատանման օրական լայնույթը (ամպլիտուդ):

78 Որոշել օդի օրական միջին ջերմաստիճանը:

(79-80) Երկրում բնակչության թիվը 10 000 000 մարդ է, որից գյուղական բնակչությունը կազմում է 6 000 000 մարդ: Երկրի տարածքը կազմում է  $80\ 000\text{կմ}^2$ :

79 Որոշել բնակչության միջին խտությունը:

80 Որոշել ուրբանիզացման մակարդակը:

6 Օվկիանոսի հատակի 200-2500մ խորությամբ կտրուկ խորացող մասը կոչվում է.

- 1) մայրցամաքային ծանծաղուտ
- 2) փողրակ (անդունդ)
- 3) հորստ
- 4) մայրցամաքային լանջ

7 Մառցադաշտի դանդաղ շարժման արդյունքում, նրա կողմից քերված, տարված քայքայված նյութերից առաջացած թմրաշարերը կոչվում են.


- 1) մորեններ
- 2) դյուններ
- 3) բարխաններ
- 4) խառնարաններ

8 Լեռան գագաթին օդի ջերմաստիճանը  $-14^{\circ}$  է, իսկ նույն պահին ստորոտում՝  $+4^{\circ}$ : Օդի ճնշումը գագաթին 380մմ է: Որքա՞ն կլինի օդի ճնշումը լեռան ստորոտին (յուրաքանչյուր 1000մ-ին ջերմաստիճանի փոփոխությունը ընդունել  $6^{\circ}$ ).

- 1) 395մմ
- 2) 680մմ
- 3) 365մմ
- 4) 80մմ

9 Ռելիեֆի կտրվածքի նկարում  $n^{\circ}$  տառով նշանակված կետում է մթնոլորտային ճնշումը ամենացածրը:

- 1) Բ
- 2) Գ
- 3) Դ
- 4) Ա



10 Նկարում արևմուտքից արևելք ուղղությամբ  $n^{\circ}$  մայրցամաքի ռելիեֆի կտրվածքն է պատկերված:



- 1) Աֆրիկա
- 2) Ավստրալիա
- 3) Անտարկտիդա
- 4) Հարավային Ամերիկա

11 Ո՞ր գույգում տրված ծովերն են միմյանց հետ միացած նեղուցով:

- 1) Չուկոտյան և Բերինգի ծովերը
- 2) Հարավչինական և Օխոտի ծովերը
- 3) Թիմորի և Կորալյան ծովերը
- 4) Սարգասյան և Բաֆինի ծովերը

12 Ճնապողգուլային հողերը բնորոշ են.

- 1) բարեխառն գոտու խառն անտառների տարածման շրջաններին
- 2) բարեխառն գոտու լայնատերև անտառների տարածման շրջաններին
- 3) մերձարևադարձային գոտու սավանաների և նոսր անտառների տարածման շրջաններին
- 4) հասարակածային խոնավ մշտադալար անտառների տարածման շրջաններին

13 Այդ գետը հարթավայրային գետ է: Այն Հյուսիսային Սառուցյալ օվկիանոսի ամենամեծ ջրհավաք ավազան ունեցող գետն է: Ո՞րն է այդ գետը:

- 1) Վոլգան
- 2) Ենիսեյը
- 3) Մակենգին
- 4) Օբը

14 Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Հարավամերիկյան պլատֆորմի արևելյան մասում ընկած խաղաղօվկիանոսյան գետինկլիմայում ձևավորվել են Անդյան լեռները:
- 2) Հարավային Ամերիկայի բարեխառն գոտու արևելյան մասում կլիման ցամաքային է:
- 3) Հարավային Ամերիկայի տարածքի մեծ մասը պատկանում է ներքին հոսքի ավազանին:
- 4) Արևադարձային անապատները Հարավային Ամերիկայում տարածվում են Ատլանտյան օվկիանոսի առափնյա նեղ շերտով:


15 Ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Երկրի մակերևույթից ներծծվող ջուրը, հանդիպելով լուծվող նյութերի (կրաքար, կավիճ), լուծում հեռացնում է դրանք՝ առաջացնելով քարայրներ:
- 2) Հրաբխի ժայթքման ժամանակ մղանցքի վերևում առաջացած ձագարածև գոգավորությունը կոչվում է խառնարան:
- 3) Երկրակեղևի մայրցամաքային տիպում բազալտային շերտը գտնվում է նստվածքային և գրանիտային շերտերի միջև:
- 4) Խոշոր գետերի քշած-տարած նյութերը՝ գետաբերուկները, կուտակվելով առաջացնում են հարթավայրեր:

16 «Լիճ-թափվող գետ» սկզբունքով կազմված գույգերից ո՞րն է ճիշտ:

- 1) Վերին-Մակենգի
- 2) Ուրմիա-Տիգրիս
- 3) Տանգանիկա-Չամբեզի
- 4) Սևանա-Մասրիկ

75 Քարտեզի վրա ՀՀ լանդշաֆտային ո՞ր գոտին է նշված Բ տառով:



- 1) լեռնաանտառային
- 2) անապատակիսաանապատային
- 3) ձյունամերձ
- 4) մերձալպյան և ալպյան

76 Հասարակածի վրա գտնվող երկու կետերից մեկը գտնվում է արլ. ե. 65°-ի, մյուսը՝ արմ. ե. 130°-ի վրա: Որքա՞ն կլիմի նրանց միջև ամենակարճ հեռավորությունը արտահայտված կիլոմետրով:

71 Ո՞ր գույգում տրված երկրներն են ցորենի արտադրությամբ գտնվում աշխարհի առաջատար եռյակում:

- 1) Շվեդիա և Իսլանդիա
- 2) Լեհաստան և Իրան
- 3) Չինաստան և ԱՄՆ
- 4) Նորվեգիա և Ինդոնեզիա


72 Տրվածներից ո՞րը բնակավայրերի օդային ավազանի մաքրության պահպանությանն ուղղված միջոցառում չէ:

- 1) կանաչապատ տարածքների ստեղծումը
- 2) բնակավայրերը շրջանցող ավտոմայրուղիների ստեղծումը
- 3) աքվակուլտուրայի զարգացումը
- 4) փոշեծծիչ և գազակլանիչ կայանքների տեղադրումը

73 Կենդանական ռեսուրսների պահպանությանն ուղղված միջոցառում չէ՝

- 1) հատուկ պահպանվող տարածքների ստեղծումը
- 2) կենսատեխնիկական միջոցառումների կիրառումը
- 3) կենդանիների կլիմայավարժեցումը
- 4) արոտաշրջանառության կազմակերպումը

74 Քարտեզի վրա Բ տառով նշված տարածքներում ո՞ր լեզուն է գերակշռում:



- 1) թուրքերեն
- 2) արաբերեն
- 3) պարսկերեն
- 4) եբրայերեն

17 «Հարթավայր-աշխարհամաս» սկզբունքով կազմված գույգերից ո՞րն է ճիշտ:

- 1) Մեծ հարթավայրեր-Ասիա
- 2) Պադանի դաշտավայր-Ավստրալիա և Օվկիանիա
- 3) Մերձատլանտյան դաշտավայր-Ամերիկա
- 4) Գվինական սարահարթ-Աֆրիկա

18 Ո՞ր ծովային հոսանքներն են ազդեցություն թողնում Աֆրիկայի կլիմայի ձևավորման վրա:

- 1) Գվինեական և Բենգելյան
- 2) Գվինական և Գոլֆստրիմ
- 3) Հյուսիսատլանտյան և Մուսսոնային
- 4) Բրազիլական և Պերուական

19 Քարտեզի վրա ո՞ր տառով է նշված Ադրիատիկ ծովը:

- 1) Ա
- 2) Բ
- 3) Գ
- 4) Դ



20 **Քարտեզի վրա ո՞ր տառով է նշված Բուդապեշտ մայրաքաղաքը:**

- 1) Ե
- 2) Չ
- 3) Է
- 4) Ը

21 **Այն երևույթը, երբ ամրապնդվում է ազգի լեզվական ու մշակութային ընդհանրությունը, երբ ազգը դառնում է միասնական ու ամրակուռ կոչվում է.**

- 1) ժողովրդագրական ճգնաժամ
- 2) ազգերի ձուլում
- 3) ժողովրդագրական քաղաքականություն
- 4) ազգային համախմբում

22 **Գյուղատնտեսական արտադրության վարման այն եղանակը, երբ գյուղատնտեսական մթերքների ավելացումը ձեռք է բերվում ցանքատարածությունների ընդարձակման և անասունների գլխաքանակի աճի հաշվին կոչվում է.**

- 1) «կանաչ հեղափոխություն»
- 2) ագրոարդյունաբերական համալիր
- 3) էքստենսիվ գյուղատնտեսություն
- 4) ինտենսիվ գյուղատնտեսություն

23 **Այդ երկիրը Հարավային Եվրոպայի խոշոր երկրներից է: Բնակչության գերակշիռ մասը ուղղափառ քրիստոնյաներ են: Չարգացած է մերձարևադարձային պաղարածությունը (ձիթապտուղ, խաղող, ցիտրուսներ): Ո՞րն է այդ երկիրը:**

- 1) Ալբանիան
- 2) Իսպանիան
- 3) Հունաստանը
- 4) Իտալիան

24 **Երկրի բնակչության թիվը 4680000 մարդ է: Մեկ բնակչին բաժին է հասնում 1,8 հա գյուղատնտեսական հողահանդակ: Երկրի գյուղատնտեսական հողահանդակների մակերեսը կլինի.**

- 1) 8424000հա
- 2) 2600000 հա
- 3) 84240000հա
- 4) 26000000 հա

25 **«Ժողովուրդ-տարածված կրոն» սկզբունքով կազմված զույգերից ո՞րն է սխալ:**

- 1) ճապոնացիներ-սինտոյականություն
- 2) ալբանացիներ- քրիստոնեություն
- 3) մոնղոլներ- բուդդայականություն
- 4) պարսիկներ- մահմեդականություն

65 **ՀՀ լեռնագրության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:**

- 1) Սևանա լիճը եզրավորված է միայն ծալքաբեկորավոր լեռներով:
- 2) ՀՀ ամենաբարձր ծալքաբեկորավոր լեռնագագաթը Կապուտջուղն է:
- 3) Աշոցքի սարահարթում են գտնվում Ծղուկ և Մեծ Իշխանասար գագաթները:
- 4) Ուրծի լեռնաշղթայից սկսվում և դեպի արևելք գալարածև տարածվում են Բարգուշատի և Չանգեգուրի լեռնաշղթաները:

66 **ՀՀ կլիմայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:**

- 1) Հանրապետության տարածքը ամբողջությամբ գտնվում է բարեխառն կլիմայական գոտում:
- 2) ՀՀ տարածքում ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է Արագածի լանջին՝ Քարի լճի շրջանում:
- 3) Տարվա ընթացքում տեղումների նվազագույն քանակը թափվում է գարնան ամիսներին:
- 4) Տարվա ցուրտ ժամանակահատվածում միջլեռնային գոգավորություններում դիտվում է ջերմաստիճանային շրջադասություն (ինվերսիա):

67 **ՀՀ բնակչության վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ:**

- 1) Ազգային կազմով գրեթե միատարր երկիր է (մոտ 98%-ը հայեր):
- 2) Բնակչության խտության ցուցանիշն ամենաբարձրն է մինչև 1000 մ բարձրության գոտում:
- 3) Ամենաբարձրադիր բնակավայրը գտնվում է Տավուշի մարզում:
- 4) Բնակչության խտությունը մեծ է Արմավիրի մարզում:

68 **ՀՀ արդյունաբերության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:**

- 1) ՀՀ մեքենաշինության տեղաբաշխումը ամբողջությամբ համընկնում է գունավոր մետաղաձուլության տեղաբաշխման հետ:
- 2) ՀՀ էլեկտրակայանների ընդհանուր թվում առավել շատ է ջէկ-երի քանակը:
- 3) Քիմիական արդյունաբերության խոշոր կենտրոններ են Արմավիր և Գյումրի քաղաքները:
- 4) Ալյումինի արդյունաբերության կենտրոնը Երևանն է:

69 **Տրվածներից ո՞րն է բնորոշ և՛ Սյունիքի, և՛ Վայոց ձորի մարզերին:**

- 1) Մարզերում գերակշռում են մակերևույթի հարթ ձևերը:
- 2) Սահմանակից են Նախիջևանի ԻՀ-ին:
- 3) Տուֆի, պեղիտի պաշարներով ամենահարուստ մարզերն են:
- 4) Աչքի են ընկնում ուրբանիզացման բարձր մակարդակով:

70 **ՀՀ ո՞ր մարզում է գտնվում Շիկահողի արգելոցը:**

- 1) Տավուշի
- 2) Արարատի
- 3) Սյունիքի
- 4) Արմավիրի

- 60 **Ո՞ր պնդումն է ճիշտ:**
- 1) Բնակչության բնական աճը բնակչության թվի փոփոխությունն է միգրացիայի հաշվին:
  - 2) Բնակչության վերարտադրության երկրորդ տիպի երկրներին բնորոշ է դեպոպուլյացիան:
  - 3) Բնակչության վերարտադրության երկրորդ տիպին են պատկանում Ասիայի, Աֆրիկայի զարգացող երկրները:
  - 4) Բնակչության վերարտադրության առաջին տիպի երկրներում իրականացվում է ծնելիության կրճատմանն ուղղված քաղաքականություն:

- 61 **Տրված երկրներից որի՞ էլեկտրաէներգետիկայի կառուցվածքում է գերակշռում ջրէկ-ների բաժինը:**
- 1) Ավստրալիա
  - 2) Ալժիր
  - 3) Ֆրանսիա
  - 4) Նորվեգիա

- 62 **Չինաստանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:**
- 1) Աշխարհի ամենաբարձր ուրբանիզացման մակարդակ ունեցող երկիրն է:
  - 2) Երկրի արևելքում են տեղաբաշխված գլխավոր արդյունաբերական կենտրոնները:
  - 3) Արտահանության կառուցվածքում մեծ է ածխի ու երկաթաքարի բաժինը:
  - 4) Էլեկտրաէներգետիկայի կառուցվածքում գերակշռում է ջրէկ-ների բաժինը:

- 63 **Բնութագրումով որոշել երկիրը:**
- Տարածքի մեծությամբ աշխարհի գերխոշոր երկրներից է: Ներկայիս բնակչության մեծամասնությունը ձևավորվել է ներգաղթի արդյունքում: Բնակչության 90%-ը բնակվում է երկրի հարավային սահմանի երկայնքով: Երկիրը գտնվում է զարգացման հետարդյունաբերական փուլում, տնտեսության կառուցվածքում շատ բարձր են ծառայությունների ոլորտի, մշակող արդյունաբերության բաժինները: Միջազգային մասնագիտացման ճյուղերից է փայտամթերումը: Այդ երկիրն է՝
- 1) Հնդկաստան
  - 2) Բրազիլիա
  - 3) Կանադա
  - 4) Չինաստան

- 64 **Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:**
- 1) Ջրադեցնում է մոտ 200հազ. կմ<sup>2</sup> մակերես:
  - 2) Գտնվում է Խաղաղօվկիանոսյան գեոսինկլինալային գոտու կենտրոնական մասում:
  - 3) Մեծ ծովի ափին գուգահեռ տարածվում են Արևելապոնտական լեռները:
  - 4) Լեռնաշխարհից արևմուտք տարածվում է Իրանական բարձրավանդակը:

- 26 **«Պետություն-թերակղզի» սկզբունքով կազմված գույգերից ո՞րն է սխալ:**
- 1) Պորտուգալիա - Պիրենեյան
  - 2) Նորվեգիա-Սկանդինավյան
  - 3) Նեպալ-Հնդկաչին
  - 4) Օման-Արաբական

- 27 **«Արդյունաբերության ճյուղ-հումք» սկզբունքով տրված գույգերից ո՞րն է սխալ:**
- 1) քիմիական արդյունաբերություն-նավթ
  - 2) սև մետաղածուլություն-երկաթաքար
  - 3) սննդի արդյունաբերություն-բամբակ
  - 4) էլեկտրաէներգետիկա-բնական գազ

- 28 **Ո՞ր պնդումն է սխալ:**
- 1) Կորսիկա կղզին պատկանում է Ֆրանսիային:
  - 2) Ֆրանսիան ակտիվորեն վարում է բնակչության բնական աճը խրախուսող ժողովրդագրական քաղաքականություն:
  - 3) Ֆրանսիան այլումինի սեփական պահանջարկը բավարարում է բացառապես ներկրված այլումինի գլանվածքի շնորհիվ:
  - 4) Ֆրանսիայում խաղողագործությունը տարածված է ամենուրեք, բացառությամբ հյուսիսի և հյուսիս-արևմուտքի:

- 29 **Ո՞ր գույգում տրված երկրներում է բնակչության մեծ մասը դավանում իսլամ:**
- 1) Արգենտինայում և Սեբսիկայում
  - 2) Վիետնամում և Լատսում
  - 3) Իսրայելում և Վրաստանում
  - 4) Ինդոնեզիայում և Աֆղանստանում

- 30 **Ո՞ր գույգում տրված երկրները ունեն անկլավային տարածք:**
- 1) ԱՄՆ-ը և Ռուսաստանը
  - 2) Ռումինիան և Մոլդովան
  - 3) Սան Մարինոն և Լեստոտոն
  - 4) Չադը և Նիգերը

- 31 **«Պետություն-բնական հարուստ ռեսուրսներ» սկզբունքով կազմված գույգերից ո՞րն է սխալ:**
- 1) Վրաստան-մանգան
  - 2) Նորվեգիա-ջրաէներգետիկ ռեսուրսներ
  - 3) Բրազիլիա-երկաթ
  - 4) Ճապոնիա-գյուղատնտեսական հողահանդակներ

- 32 **Ո՞ր պնդումն է ճիշտ:**
- 1) Այժմ երկրագնդի մեկ բնակչի հողային ռեսուրսներով ապահովվածությունը 20-րդ դարի կեսերի համեմատ աճել է:
  - 2) Հետարդյունաբերական փուլում գտնվող երկրներում Համախառն ներքին արդյունքի մեջ (ՀՆԱ) գյուղատնտեսության բաժինը գերազանցում է 50%-ը:
  - 3) Աշխարհում էլեկտրաէներգիայի արտադրության մեջ ամենամեծ բաժին ունեն ջերմաէլեկտրակայանները(ՁԷԿ):
  - 4) «Կանաչ հեղափոխությունը» 21-րդ դարի երևույթ է և բնորոշ է աշխարհի զարգացած երկրներին, հատկապես ԱՄՆ-ին, Գերմանիային և Ճապոնիային:

- 33 **Ո՞ր գույգում տրված երկրներում է բնակչության բնական աճը կազմում մինչև 10%:**
- 1) Չինաստան և Ճապոնիա
  - 2) Աֆղանստան և Նեպալ
  - 3) Հնդկաստան և Բանգլադեշ
  - 4) Եգիպտոս և Նիգերիա

- 34 **Աշխարհում ածխի արդյունահանմամբ առաջատար երկրներ են.**
- 1) Իտալիան և Հունաստանը
  - 2) Հնդկաստանը և Չինաստանը
  - 3) Ֆրանսիան և Շվեյցարիան
  - 4) Ադրբեջանը և Իրանը

- 35 **Ո՞ր դաշտն է ընկած Արաքսի հովտում:**
- 1) Երզնկայի դաշտը
  - 2) Ալաշկերտի դաշտը
  - 3) Սշո դաշտը
  - 4) Բասենի դաշտը

- 36 **Տրված «գետ-վտակ» գույգերից ո՞րն է սխալ:**
- 1) Կուր-Թարթառ
  - 2) Ճորոխ-Օլթի
  - 3) Արաքս-Ախուրյան
  - 4) Արևմտյան Եփրատ-Կուր

- 37 **ՀՀ-ում ամպամած օրերի թիվն ամենամեծն է.**
- 1) Հյուսիս-արևելյան շրջանում (Իջևան)
  - 2) Արագածի գագաթամերձ մասում
  - 3) Արարատյան դաշտում (Երասխ)
  - 4) Հարավ-արևելյան շրջանում (Սեղրի)

- 54 **Տրված «ապարատեսակ - ծագում» գույգերից ո՞րն է ճիշտ:**
- 1) մարմար - նստվածքային
  - 2) գրանիտ - նստվածքային
  - 3) բազալտ - հրային (մագմային)
  - 4) կրաքար - փոխակերպային (մետամորֆային)

- 55 **Տրված օվկիանոսային հոսանքներից ո՞րն է անցնում Եվրասիայի հարավային ափերով:**
- 1) Կուրոսիո
  - 2) Մուսոնային
  - 3) Կանարյան
  - 4) Գոլֆստրիմ

- 56 **Տրված պնդումներից ո՞րն է բնորոշ Աֆրիկայի սավաննաների և նոսրանտառների բնական զոնային:**
- 1) տարածվում է հիմնականում մերձհասարակածային նաև հասարակածային (արևելքում) ու արևադարձային կլիմայական գոտիներում
  - 2) հողային ծածկում գերակշռում են պողոզային և ճմապողզողային հողերը
  - 3) հիմնականում տարածված բուսատեսակներն են ֆիկուսը, կաուչուկատու հևեան, փաթաթվող լիանները
  - 4) հիմնականում տարածված կենդանատեսակներն են արջը, գայլը, աղվեսը

- 57 **Ո՞ր ժամանակաշրջանում են վարարում Աֆրիկայի մերձհասարակածային գոտու գետերը:**
- 1) յուրաքանչյուր կիսագնդի գարնանը
  - 2) յուրաքանչյուր կիսագնդի ամռանը
  - 3) յուրաքանչյուր կիսագնդի ձմռանը
  - 4) ողջ տարվա ընթացքում


- 58 **Տրված շարքերից որի՞ բոլոր աշխարհագրական օբյեկտներն են գտնվում Հարավային Ամերիկայում:**
- 1) Պադանի դաշտավայր, Վինսոն լեռ, Իսսիկ-Կուլ լիճ
  - 2) Լա - Պլատայի դաշտավայր, Օրիսաբա հրաբուխ, Էրի լիճ
  - 3) Լավրենտիանյան սարահարթ, Կոտոպախի հրաբուխ, Մեծ Արջի լիճ
  - 4) Օրինոկոյի դաշտավայր, Ռուիս հրաբուխ, Պոոպո լիճ

- 59 **Ո՞ր գույգում տրված երկրներն են միապետություններ:**
- 1) Թուրքիա և Ադրբեջան
  - 2) Բելգիա և Շվեդիա
  - 3) Պորտուգալիա և Ֆրանսիա
  - 4) Իռլանդիա և Իտալիա



51 Քարտեզի հատվածի վրա ո՞ր տառով նշված սլաքն է ցույց տալիս հյուսիսը:

- 1) Ա
- 2) Բ
- 3) Գ
- 4) Դ



52 Ժամը քանիսը կլինի 5-րդ ժամային գոտում գտնվող բնակավայրում, եթե 8-րդ ժամային գոտում գտնվող բնակավայրում ժամը 18<sup>00</sup>-ն է:

- 1) 13<sup>00</sup>
- 2) 15<sup>00</sup>
- 3) 21<sup>00</sup>
- 4) 23<sup>00</sup>

53 Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Ջերմաստիճանի բարձրացումից մթնոլորտային ճնշումը բարձրանում է:
- 2) Մթնոլորտի կազմում թթվածնի քանակը գերազանցում է ազոտի քանակին:
- 3) Մթնոլորտային օդը տաքանում է Երկրի մակերևույթից ստացած ջերմության հաշվին:
- 4) Հասարակածային լայնություններում գերիշխում է մթնոլորտային բարձր ճնշման մարզը:

38 Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) ՀՀ ջրային պաշարների մեծ մասը ձևավորվում է հարևան տարածքներից՝ Արաքս գետի ջրային պաշարների հաշվին:
- 2) ՀՀ գետային ցանցը առավել զարգացած է Կուրի ավազանում և Չանգեզուրի ծալքաբեկորավոր լեռների շրջանում:
- 3) ՀՀ-ում ամենամեծ հանքայնացում ունեն հրաբխային մարզի ջրերը:
- 4) Քասաղը Մեծամորի աջակողմյան վտակն է և սկիզբ է առնում Կարսի սարահարթից:

39 Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) ՀՀ-ում բնակչության միջին խտությունը սահմանակից երկրների համեմատությամբ ցածր է:
- 2) 1960-ական թվականներից հետո ընկած ժամանակահատվածում ՀՀ բնակչության ծնելիության ցուցանիշը աճել է:
- 3) ՀՀ-ին բնորոշ է բնակչության խտության աստիճանական նվազումն ըստ տեղանքի բարձրության:
- 4) Եզդիների մեծ մասն ապրում է Տավուշի և Գեղարքունիքի մարզերի գյուղական համայնքներում:

40 ՀՀ-ում ուղևորաշրջանառությամբ տրանսպորտի ո՞ր տեսակն է առաջատարը:

- 1) երկաթուղայինը
- 2) խողովակաշարայինը
- 3) ավտոմոբիլայինը
- 4) ջրայինը

41 Ո՞ր զույգում տրված մարզերի համար է հանքային ջրերի արտադրությունը մասնագիտացման ճյուղ:

- 1) Լոռու և Շիրակի
- 2) Տավուշի և Կոտայքի
- 3) Սյունիքի և Շիրակի
- 4) Արմավիրի և Արագածոտնի

42 ՀՀ ո՞ր մարզի տարածքի զգալի մասն է ընկած Ազատ և Վեդի գետերի ավազաններում:

- 1) Վայոց ձորի
- 2) Արարատի
- 3) Արմավիրի
- 4) Արագածոտնի

43 Մինչև 1000մ բացարձակ բարձրության վրա է բնակվում ՀՀ բնակչության մոտ.

- 1) 34%-ը
- 2) 44%-ը
- 3) 54%-ը
- 4) 64%-ը

44 Տրվածներից ո՞րն է մթնոլորտի մարդածին աղտոտման աղբյուր:

- 1) հրաբուխը
- 2) ծովային տրանսպորտը
- 3) լեռնային ապարների քայքայումը
- 4) փոշեհողը

45 Մշակովի հողահանդակներով հարուստ է.

- 1) Եգիպտոսը
- 2) Իսլանդիան
- 3) Ուկրաինան
- 4) Նորվեգիան

46 Ջրավազանները աղտոտող արհեստական նյութերից են.

- 1) հարթավայրային գետերով տեղափոխվող փայտանյութերը
- 2) քիմիական պարարտանյութերը
- 3) ապարների քիմիական հողմահարման հետևանքով առաջացած նյութերը
- 4) ջրէկերում էներգետիկ նպատակներով օգտագործված ջրերը

47 Հողաբարելավման միջոցառում է.

- 1) հողերի աղակալումը
- 2) գերխոնավ հողերի ցամաքեցումը
- 3) շահագործվող հանքավայրերում պոչամբարների ստեղծումը
- 4) օգտակար հանածոների հանքավայրերի շահագործումը

48 Օգտակար հանածոների հանքաքարային և ոչմետաղային պաշարները, որոնք գտնվում են Երկրի մակերևույթում, ընդերքում, ծովերի, օվկիանոսների, լճերի ջրերում և օգտագործվում են տնտեսության մեջ կոչվում են.

- 1) հողային ռեսուրսներ
- 2) երկրակեղևի շերտեր
- 3) ռեկրեացիոն ռեսուրսներ
- 4) հանքային ռեսուրսներ

49 Քարտեզի վրա Ադստև գետը ո՞ր տառով է նշված:

- 1) Ա
- 2) Բ
- 3) Գ
- 4) Դ



50 Քարտեզի վրա Ստեփանավան քաղաքը ո՞ր տառով է նշված:

- 1) Ե
- 2) Զ
- 3) Է
- 4) Ը